ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 196

«30» 12 2019թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2019թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր՝ 7 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2019թվական թիվ 21

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» հոդված 69-ի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի պահանջներով, հիմք ընդունելով Մրգաստանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 20 դեկտեմբերի 2019թ. հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին թիվ 2 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մրգաստան համայնքի սեփականություն հանդիսացող 04-068-0115-0012 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական այլ հողատեսքի համար հայտարարված աճուրդը չի կայացել` հայտեր չլինելու պատճառով, համաձայն աճուրդային հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրության:
2.Հաստատել` 2019թվականի դեկտեմբերի 20-ին Մրգաստանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությունը` աճուրդը չկայանալու մասին, Մրգաստան համայնքի 04-068-0115-0012 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի վերաբերյալ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական դեկտեմբերի 20
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2019թվականի թիվ 22

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի բնակիչ՝ Սամվել Էլիբեկի Երոյանը /ծնված 13 հուլիսի 1963թվական/ դիմել է, Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2-րդ փողոց, 8 տուն հասցեում գտնվող սեփականության իրավունքով, իրեն 04--068-0011-0008 կադաստրային ծածկագրով 1252քմ. տնամերձ հողամասի և անհատույց տրամադրված 148քմ. հողամասի վրա, արտաքին մակերեսը՝ 121.1քմ. ինքնակամ կառուցված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը՝ ճանաչելու խնդրանքով:
Ինքնակամ կառույցը կառուցվել է՝ 1956թվականին:
Հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին և չի ընդգրկված նախատեսված սահմանափակումների ցանկում:Շենք-շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 6-րդ կետի /բ/ ենթակետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրինականացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2-րդ փողոց, 8 տուն հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացի՝ Սամվել Էլիբեկի Երոյանի գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքն, իրեն սեփականության իրավունքով պատկանող 1252քմ. հողամասի և անհատույց տրամադրված 148քմ. հողամասի վրա:
Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում:Կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
2.Կառույցի պահպանումը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:
3.Շենք-շինությունների և հողամասի մակերեսները ենթակա են ճշտման, համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
4.Առաջարկել՝ Սամվել Էլիբեկի Երոյանին /ծնված 13 հուլիսի 1963թվական/ պատկանող շենք-շինության և հողամասի վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել՝ սեփականության իրավունքը, իրեն պատկանող հողամասի և նրա

վրա կառուցված բնակելի տան գույքային միավորի նկատմամբ և տրամադրել՝ սեփականության իրավունքի վկայական:
5.04-068-0011-0008 կադաստրային համարով տնամերձ հողամասի վրա կառուցված տանը տալ՝ 2 փողոց, 8 տուն հասցեն:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական դեկտեմբերի 24
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2019թվական թիվ 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 219-ի 1-ին մասի 2-րդ կետով և իրականացնելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2019թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմին խրախուսել նրանց նկատմամբ կիրառելով՝ միանվագ դրամական պարգևատրում:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական դեկտեմբերի 24
Մրգաստան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» դեկտեմբերի 2019թվական թիվ 39

### ԱՐԱ ՎԱՐԴԱՆԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 101-ով և հիմք ընդունելով Արա Վարդանի Ղազանչյանի դիմումը՝ իրեն համայնքում իրականացվող կոմունալ աշխատանքներին մասնակից դարձնելու մասին

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում իրականացվող բնապահպանական միջոցառումների շրջանակներում, համայնքի փողոցները կենցաղային աղբից և աղբոտումից մաքրելու համար, Արա Վարդանի Ղազանչյանի հետ կնքել՝ «Ծառայությունների մատուցման ժամանակավոր աշխատանքային պայմանագիր»:
2.Արա Վարդանի Ղազանչյանը աշխատանքները սկսի՝ 19 դեկտեմբերի 2019թվականից, համաձայն՝ «Ծառայությունների մատուցման ժամանակավոր աշխատանքային պայմանագրի»:
3.Պայմանագրի ժամկետի ավարտ սահմանել՝ 26 դեկտեմբերի 2019թվականը:
4.Պայմանագրի գին սահմանել՝ 35 000 /երեսունհինգ հազար/ դրամը:
5.Հաշվապահին կատարել վճարում, համաձայն՝ պայմանագրի օրենքով սահմանված կարգով:
6.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական դեկտեմբերի 19
Մրգաստան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» դեկտեմբերի 2019թվական թիվ 40

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հոդված 35-ի 1-ին մասի 24 կետով, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 219-ի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 24 դեկտեմբերի 2019թվականի թիվ 23 որոշումը՝ աշխատակազմին պարգևատրելու մասին

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2019թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, կիրառել՝ միանվագ դրամական պարգևատրում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի հետևյալ աշխատակիցների նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ • 04703556

2019թվական դեկտեմբերի 25
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2019թվական թիվ 41

ՌԱՖԻԿ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 14.03.2018թվականի թիվ 01/17.1/1502-18 հանձնարարականով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 16.03.2018վականի թիվ 01/03.2/1012-18 գրությունը և Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի համաձայնությունը իր նախորդ տարիների ամենամյա չօգտագործված արձակուրդից 17 օր օգտագործելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին տրամադրել, նախորդ տարիների ամենամյա չօգտագործված արձակուրդից 17 աշխատանքային օր տևողությամբ՝ 8 հունվարի 2020թվականից:
2.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին իր բացակայության ընթացքում կփոխարինի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գևորգ Օնիկի Հակոբյանը:
3.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը աշխատանքի պարտականությունների կատարմանն անցնի՝ 3 փետրվարի 2020թվականից:
4.Հաշվապահին կատարել վճարում՝ օրենքով սահմանված կարգով:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական դեկտեմբերի 27
Մրգաստան համայնք